Արձանագրություն 7

«ՀՀԿԳՆԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համակարգչային սարքավորումների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.12.18թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյան
Հ. Մուշեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Մ. Աղայանց)

1.1 «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով պահանջվող որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Մ. Աղայանց)

2.1 «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

- Հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
- Երևանի պետական համալսարան հիմնադրամի հետ 13.04.2017թ կնքված թիվ <<ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-17/27>> պայմանագիրը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված, քանի որ պայմանագրի տեխնիկական-բնութագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետը չի համապատասխանում գնման ժամանակացույցով սահմանված վերջնաժամկետին, ուստի հանձնման-ընդունման արձանագրությունը հանարավորություն չի տալիս գնահատել ապրանքների սահմանված ժամկետում մատակարարված լինելու հանգամանքը, հետևաբար ներկայացված պայմանագիրը հնարավոր չէ գնահատել որպես պատշաճ կատարված:
- Ներկայացված պայմանագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը առաջարկել «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո ժամը 11:00-ին ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկի, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ *3, դեմ 0:*

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մ. Աղայանց /նախագահ/

_____ Ա. Խաչատրյան

_____ Հ. Մուշեղյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/